

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 13
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2018թ. դեկտեմբերի 26-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփում
Զեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի պետ Ն.Ղազարյան
2. Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփում
Զեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան
3. ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2018 թվականին կատարված աշխատանքների ամփոփում
Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
4. «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվություն
Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան
5. 2018 թվականին վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների հաշվետվություն
Զեկուցող՝ պրոռեկտոր Խ.Բեգիրջյան
6. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 2019-2024թթ. ռազմավարական ծրագիրը հավանության արժանանալու հարցը:
Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան
7. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի մագիստրանտ Տիգրան Արամի Մուղնեցյանի մագիստրոսական թեզի թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան
8. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Բաբգի Գազիկի Նալչաջյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
9. Ընթացիկ հարց: Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Լիա Գարեգինի Թևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
10. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի

պահպանման և զարգացման ծրագրի՝ («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր)) 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունն ընդունելու մասին:

Զեկուցողներ՝ Գ.Հովհաննիսյան, Տ.Հարությունյան, Ռ.Աղուզումցյան

11. Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտներ Արման Ենգիբարյանի, Արմինե Դանիելյանի, Արաքսյա Կասիմյանի, Արման Աղամյանի, Գայանե Խաչատրյանի մագիստրոսական թեզերի թեմաների փոփոխման հարցը:
Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան

1. **Լսեցին՝** Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ասպիրանտուրայի բաժնի վարիչ Ն.Ղազարյան

Զեկուցողը ներկայացրեց ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքների հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ն.Ղազարյանը:

Որոշեցին՝ Ասպիրանտուրայի հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներն ընդունել ի գիտություն:

2.**Լսեցին՝** Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ Ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան:

Զեկուցողը ներկայացրեց մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը, Գ.Չատինյանը

Որոշեցին՝ Մագիստրատուրայի հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքները գնահատել լավ:

3.**Լսեցին** ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2018 թվականին կատարված աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողը մանրակրկիտ ներկայացրեց ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2018 թվականին կատարված աշխատանքները (հաշվետվությունը կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Մ. Մարգարյանը, Գ.Չատինյանը, Ն.Ղազարյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2018 թվականին կատարված աշխատանքները գնահատել լավ:

4.**Լսեցին՝** «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների հաշվետվությունը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցողն ամփոփ ներկայացրեց ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքները (հաշվետվությունը կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Գ. Չատինյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքները գնահատել լավ:

5.Լսեցին՝ 2018 թվականին վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների հաշվետվությունը:

Զեկուցող՝ Լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր Խ.Բեգիրջյան

Զեկուցողն ամփոփ ներկայացրեց 2018 թվականին վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքները (հաշվետվությունը կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Խ. Բեգիրջյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայում 2018 թվականին վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքները գնահատել լավ:

6.Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 2019-2024թթ. ռազմավարական ծրագիրը հավանության արժանանալու հարցը:

Զեկուցող՝ իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան

Զեկուցողը ներկայացրեց Ակադեմիայի 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի ընդհանուր դրույթները (կից ներկայացվում է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 2019-2024թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Ա. Եզեկյանը, Հ. Ստեփանյանը:

Որոշեցին՝ Հավանության արժանանացնել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 2019-2024թթ. ռազմավարական ծրագիրը:

7.Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի մագիստրանտ Տիգրան Արամի Մուղնեցյանի մագիստրոսական թեզի թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Մ.Մարգարյան

Զեկուցողը նշեց, որ քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի 14.12.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է քաղաքական կառավարման և հանրային քաղաքականության ամբիոնի մագիստրանտ Տիգրան Արամի Մուղնեցյանի մագիստրոսական թեզի թեմայի փոփոխման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝ Տիգրան Արամի Մուղնեցյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Ընտրական համակարգը որպես պառլամենտարիզմի անցման ինստիտուտ» վերտառությամբ:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Գ.Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Տիգրան Արամի Մուղնեցյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Ընտրական համակարգը որպես պառլամենտարիզմի անցման ինստիտուտ» վերտառությամբ:

8.Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Գագիկի Նալչաջյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 25.12.2018թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Նալչաջյանի «Ֆինանսական վերահսկողության իրավակարգավորման հարցերը» թեմայով թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ներկայումս նույն վերտառությամբ թեկնածուական ատենախոսություն է ներկայացված հրապարակային պաշտպանության ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝ Ռաֆֆի Նալչաջյանի թեկնածուական ատենախոսության թեման փոփոխել «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Հ.Ստեփանյանը:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Ռաֆֆի Նալչաջյանի թեկնածուական ատենախոսության թեման փոփոխել «Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

9.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Լիա Գարեգինի Թևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Զեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 25.12.2018թ. կայացած նիստում քննարկվել է Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Լիա Գարեգինի Թևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին՝ Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Լիա Գարեգինի Թևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մտավոր սեփականության սահմանադրաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 –Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Հ.Ստեփանյանը, Գ. Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի հայցորդ Լիա Գարեգինի Թևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Մտավոր սեփականության սահմանադրաիրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 –Հանրային իրավունք մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել Ռաֆիկ Գարեգինի Պետրոսյանին:

10.Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի՝ («Հումանիտար

հետազոտությունների կենտրոն» («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր)) 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունն ընդունելու մասին:

Ձեկուցողներ՝ Գ.Հովհաննիսյան, Տ.Հարությունյան, Ռ.Ադուգումցյան

Ձեկուցողներն ամփոփ ներկայացրեցին 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունը (կից ներկայացվում է):

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Գ. Հովհաննիսյանը:

Որոշեցին՝ Ընդունել ՀՀ պետական կառավարման ակադեմիայում իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրի՝ («Հումանիտար հետազոտությունների կենտրոն» («Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա», «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» և «Գիտության կառավարման հետազոտական կենտրոն» ծրագրեր)) 2018 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունը (կից ներկայացվում է):

11.Լսեցին՝ Ընթացիկ հարց: Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտներ Արման Ենգիբարյանի, Արմինե Դանիելյանի, Արաքսյա Կասիմյանի, Արման Աղամյանի, Գայանե Խաչատրյանի մագիստրոսական թեզերի թեմաների փոփոխման հարցը:

Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Խաչատրյան

Ձեկուցողը նշեց, որ կառավարման ամբիոնում 24.12.2018թ կայացած նիստում քննարկվել է 1723 թողարկման մագսիտրանտներ Արման Ենգիբարյանի, Արմինե Դանիելյանի, Արաքսյա Կասիմյանի, Արման Աղամյանի, Գայանե Խաչատրյանի մագիստրոսական թեզերի թեմաների փոփոխման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ խնդրում են գիտական խորհրդին՝

1. Արման Ենգիբարյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Տեղական ինքնակառավարման մակարդակում եկամուտների և ծախսերի կառավարման հիմնախնդիրները (Երևան քաղաքի օրինակով)» վերտառությամբ:
2. Արմինե Դանիելյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Աուտոսոսինգը որպես գործարարության կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմ (կադրերի հավաքագրման օրինակով)» վերտառությամբ,
3. Արաքսյա Կասիմյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Ներդրումների ներգրավման ընդլայնման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:
4. Արման Աղամյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Արդյունավետ գովազդի ու ճիշտ բրենդինգի ազդեցությունը որպես փոքր և միջին բիզնեսի հաջողության գրավական (Ալեքս տեքստիլ ՍՊԸ-ի օրինակով)» վերտառությամբ:
5. Գայանե Խաչատրյանի մագիստրոսական թեզերի թեման փոխել «Տաղանդների կառավարման ռազմավարությունը և կիրառումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

(կից ներկայացվում է ամբիոնի նիստի քաղվածքը):

Արտահայտվեցին՝ Ս.Մարգարյանը, Վ.Խաչատրյանը:

Որոշեցին՝

1) Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտ Արման Ենգիբարյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Տեղական ինքնակառավարման մակարդակում եկամուտների և ծախսերի կառավարման հիմնախնդիրները (Երևան քաղաքի օրինակով)» վերտառությամբ:

2) Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտ Արմինե Դանիելյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Աուտոտրաինգը որպես գործարարության կառավարման արդյունավետության բարձրացման մեխանիզմ (կադրերի հավաքագրման օրինակով)» վերտառությամբ,

3) Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտ Արաքսյա Կասիմյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Ներդրումների ներգրավման ընդլայնման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

4) Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտ Արման Աղամյանի մագիստրոսական թեզի թեման փոխել «Արդյունավետ գովազդի ու ճիշտ բրենդինգի ազդեցությունը որպես փոքր և միջին բիզնեսի հաջողության գրավական (Ալեքս տեքստիլ ՍՊԸ-ի օրինակով)» վերտառությամբ:

5) Կառավարման ամբիոնի 1723 թողարկման մագսիտրանտ Գայանե Խաչատրյանի մագիստրոսական թեզերի թեման փոխել «Տաղանդների կառավարման ռազմավարությունը և կիրառումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

26 դեկտեմբերի 2018թ.

Կ.Տ.